

Title I ծրագրում ընդգրկված աշակերտների ծնողների և ընտանիքի ներգրավման քաղաքականություն, 2018-19 ուս. տարի

Բարձր առաջադիմության միջին դպրոց

Բարձր առաջադիմության ACS WASC-ի կողմից հավատարմագրված Mount Gleason միջին դպրոցը մշակել է Title I ծրագրում ընդգրկված աշակերտների ծնողների ներգրավման քաղաքականություն (գրավոր տեսքով) այդ ծնողների մասնակցությամբ: Մասնակցելու մասին առաջարկը ծնողներին արվում էր կանոնավոր Դպրոցական խորհրդի նիստերին, որոնք բաց էին բոլոր շահագրգռված ծնողների համար: Դպրոցը տարածելու է քաղաքականությունը ծնողների համար հասկանալի լեզվով տարբեր ուղիներով, օրինակ՝ տեղեկատուների միջոցով, կայքէջում տեղադրման, ծնողական ձեռնարկում և ընդունելության փաթեթներում ներդրման միջոցներով: Բարձր առաջադիմության Mount Gleason միջին դպրոցի քաղաքականությունը նկարագրում է Title I դպրոցի ծնողների ներգրավման հետևյալ պահանջների կատարման միջոցներ (20 USC 6318, բաժին 1118 (a)-(f) ներառյալ):

Ծնողների ներգրավում Title I ծրագրում

Բարձր առաջադիմության Mount Gleason միջին դպրոցը իրականացնում է հետևյալը.

- Կազմակերպում է ամենամյա ժողով՝ տեղեկացնելու Title I ծրագրի աշակերտների ծնողներին Title I պահանջներին և իրենց ներգրավված լինելու իրավունքի մասին: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.
 - Ամենամյա Title I ժողով սեպտեմբերին
 - Շրջանի Title I ժողով
 - Դպրոցի խորհրդի տրենինգ
 - «Վերադարձ դպրոց» երեկոներ և Դպրոցականների կոնֆերանսներ
- Առաջարկում է հանդիպումների ճկուն շարք: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.
 - Անգլերեն լեզվի խորհրդատվական կոմիտեի ժողովներ
 - Դպրոցի խորհրդի ժողովներ
 - Դպրոցի խորհրդատվական կոմիտեի ժողովներ
 - «Վերադարձ դպրոց» երեկոներ
- Կազմակերպված, շարունակական կերպով և ժամանակին ներգրավում է Title I-ում ընդգրկված աշակերտների ծնողներին Title I ծրագրերի և ծնողների ներգրավման քաղաքականության պլանավորմանը, վերանայմանը և բարելավմանը: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.
 - Տրամադրում է անհրաժեշտ աջակցություն ծնողների արդյունավետ ներգրավման միջոցառումներ պլանավորելու և իրականացնելու համար, որոնք բարելավելու են աշակերտների ակադեմիական առաջադիմությունը և դպրոցի աշխատանքը
 - Դպրոցի խորհրդի ենթակոմիտեի ժողովներ
 - Դպրոցի խորհրդի և Անգլերեն լեզվի խորհրդատվական կոմիտեի ժողովներ
- Տրամադրում է Title I ծրագրի աշակերտների ծնողներին արդիական տեղեկատվությամբ Title I ծրագրերի մասին: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.
 - Շաբաթական տեղեկատուներ և կայքէջում տեղադրումներ
 - Ծնողների ներգրավման միջոցառումների օրացույց/լրատվական նամակներ
 - Դպրոցի խորհրդի ժողովներ
 - Անգլերեն լեզվի խորհրդատվական կոմիտեի ժողովներ
- Բացատրում է Title I ծրագրի աշակերտների ծնողներին ուսումնական ծրագիրը, գնահատումները և հմտության մակարդակները, որոնց պետք է հասնեն աշակերտները: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.
 - «Ծնող-ուսուցիչ» հանդիպումներ
 - «Վերադարձ դպրոց» երեկոներ
 - Աշակերտական ժողովներ

- Ակադեմիական ներգրավման միջոցառումներ
- Մրցանակաբաշխություններ
- Ամենամյա Title I Ժողով
- Դպրոցի խորհրդի ժողովներ
- Անգլերեն լեզվի խորհրդատվական կոմիտեի ժողովներ
- Ծնողական սեմինարներ
- Մուտք Ծնողական պորտալ, տրենինգ և աջակցում
- Տրամադրում է Title I ծրագրի աշակերտների ծնողներին հնարավորություն մասնակցելու կանոնավոր ժողովներին, նվիրված իրենց երեխաների կրթության հարցերին: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.
 - «Ծնող-ուսուցիչ» հանդիպումներ
 - Դպրոցի խորհրդի ժողովներ
 - Անգլերեն լեզվի խորհրդատվական կոմիտեի ժողովներ
 - Դպրոցի մասին հարցումներ

Ընդհանուր պատասխանատվություն աշակերտների բարձր ակադեմիական առաջադիմության հարցում

Բարձր առաջադիմության Mount Gleason միջին դպրոցը Title I ծրագրի աշակերտների ծնողների հետ միասին մշակել է «դպրոց-ծնող» համաձայնագիր և տրամադրել է ծնողներին: Այս համաձայնագրի մեջ ասվում է ծնողների, դպրոցի ամբողջ անձնակազմի և աշակերտների ընդհանուր պատասխանատվության մասին աշակերտների բարձր ուսումնական առաջադիմության հարցում: Այստեղ նաև նկարագրվում է, թե ինչպես դպրոցը և ծնողները զարգացնելու են համագործակցություն, որպեսզի օգնեն երեխաներին հասնել Համընդհանուր հիմնական չափանիշներին: «Դպրոց-ծնող» համաձայնագիրը նկարագրում է հետևյալ կետերը, բացի կետերից, որոնք ավելացված են Title I ծրագրի աշակերտների ծնողների կողմից,

- Դպրոցի պատասխանատվություն բարձրորակ ուսումնական ծրագիր և ակադեմիական դասավանդում տրամադրելու հարցում
- Ծնողների պատասխանատվություն իրենց երեխաների ուսուցմանը աջակցելու հարցում
- Ծնողների և ուսուցիչների միջև շարունակական հաղորդակցման կարևորությունը: Հաղորդակցումը իրականացվում է ամենամյա ժողովների, աշակերտների առաջադիմության մասին զեկույցների միջոցով, նաև անձնակազմի հասանելիության, ծնողների կամավորության, ուսումնական ծրագիրը դիտարկելու, դրանում մասնակցելու հնարավորության միջոցով:

«Դպրոց-ծնող» համաձայնագիրը վերանայվում է ամեն տարի Դպրոցի խորհրդի կողմից, որտեղ կան ծնողների ներկայացուցիչներ: Բացի այդ, նիստը բաց է բոլոր շահագրգիռ ծնողների համար:

Ներուժի ստեղծում ծնողների ներգրավման համար

Բարձր առաջադիմության Mount Gleason միջին դպրոցը ներգրավում է Title I ծրագրի աշակերտների ծնողներին կառուցողական համագործակցության մեջ դպրոցի հետ: Դա աջակցում է համագործակցության անձնակազմի և հանրության միջև, ինչը նպաստում է աշակերտների ակադեմիական առաջադիմությանը: Այս նպատակների հասնելու համար, դպրոցը անում է հետևյալը.

- Օգնում է Title I ծրագրի աշակերտների ծնողներին հասկանալ, թե ինչ է ակադեմիական առարկաների չափանիշները, Շրջանի գնահատումները, և ինչպես վերահսկել և բարելավել իրենց երեխաների առաջընթացը: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.
 - Ֆորմալ և ոչ ֆորմալ ծնող/ուսուցիչ հանդիպումներ
 - Ծնողական կենտրոնի սեմինարներ
 - Մուտք Ծնողական պորտալ, տրենինգ և աջակցում
- Տրամադրում է նյութեր և վերապատրաստման ինստիտուտներ՝ օգնելու Title I ծրագրի աշակերտների ծնողներին աշխատել իրենց երեխաների հետ ակադեմիական առաջադիմությունը բարձրացնելու համար: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.

- Ընդունելության պայթեթներ
- Ծնողական կենտրոնի սեմինարներ ELD ծրագրերի, Ընդհանուր հիմնական չափանիշների և Ավարտական պահանջների վերաբերյալ
- Բացատրում է անձնակազմին Title I ծրագրի աշակերտների ծնողների աջակցությամբ ծնողների ներդրումների արժեքի մասին, և թե ինչպես աշխատել ծնողների հետ որպես հավասար գործընկերների: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.
 - Անձնակազմի ժողովներ ծնողի և ընտանիքի ներգրավման վերաբերյալ և Դպրոցական խորհրդի ժողովներ
 - Վերականգնողական արդարադատություն և «Աշակերտի ձայն և ձգտումներ»
- Համակարգում է և ինտեգրում է Title I ծրագրում ընդգրկված աշակերտների ծնողների ներգրավման ծրագիրը այլ ծրագրերի հետ և անցկացնում է այլ միջոցառումներ, որոնք խրախուսում են և օգնում են ծնողներին ավելի լիարժեք մասնակցել իրենց երեխաների կրթության գործում: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.
 - Համագործակցություն համայնքային կազմակերպությունների հետ
 - Համագործակցություն տեղական հանրային գրադարանների և անչափահասների դատական համակարգի հետ
 - Ծնողական կենտրոն
- Տարածում է Title I ծրագրի աշակերտների ծնողների մեջ տեղեկատվություն կապված դպրոցի և ծնողական ծրագրերի, ժողովների և այլ միջոցառումների հետ ծնողների համար հասկանալի ձևաչափով և լեզվով: Դպրոցը իրականացնում է դա հետևյալ ուղիներով.
 - Դպրոցի ժողովներ, սեմինարներ և միջոցառումներ
 - Գրավոր հաղորդագրությունը թարգմանվում է համապատասխան լեզվով
 - Ծնողների հարցումներ

Տրամադրում է աջակցություն Title I ծրագրի աշակերտների ծնողների կողմից առաջարկված միջոցառումների կազմակերպման գործում: Դպրոցը դա իրականացնում է ծնողներին ուղորդելով դեպի արտաքին ռեսուրսներ:

Հասանելիություն

Բարձր առաջադիմության Mount Gleason միջին դպրոցը տրամադրում է բոլոր Title I ծրագրի աշակերտների ծնողներին մասնակցելու հնարավորություն: Մենք փորձում ենք կապ հաստատել այն ծնողների հետ, ում անգլերենի իմացությունը սահմանափակ է, գաղթական աշակերտների ծնողների և հաշմանդամների հետ, տրամադրելով տեղեկատվություն և դպրոցական զեկույցներ իրենց համար հասկանալի ձևաչափով և լեզվով, օգտագործելով հետևյալ ուղիները.

- Միշտ տրամադրվում է գրավոր և բանավոր թարգմանություն դպրոցական ժողովներին, սեմինարներին և միջոցառումներին
- Գրավոր հաղորդագրությունը թարգմանվում է
- Դպրոցի մասին հարցումներ